Ապահովագրությունների տեսակները Գերմանիայում

Գերմանիայում՝ պարտադիր սոցիալական ապահովագրություններից բացի, ինչպիսիք են `բժշկական ապահովագրությունն ու առողջական ապահովագրությունն, գործում են նաև շատ այլ ապահովագրական տարբերակներ ևսԳործազրկության, կենսաթոշակի և ավտոապահովագրություն, ֆինանսական ռիսկերի ապահովագրում, որոնց մենք կարող ենք հանդիպել, ինչպիսիք են երրորդ կողմի ապահովագրությունը, բջջային հեռախոսի, անշարժ գույքի ապահովագրություններ և այլն:

Վերը նշված ապահովագրությունները ոչ պարտադիր են բայց շատ կարևոր և օգտակար են այն մարդկանց համար ովքեր ապրում են Գերմանիայիում:

Երրորդ անձի ապահովագրություն, հատուկ պատասխանատվության ապահովագրությունը, վճարում է բոլոր այն վնասների համար, որոնք դուք կամ Ձեր ընտանիքի անդամը՝ կարող եք վնաս պատճառել մի որևէ իրի, որը պատկանում է մեկ այլ անձի, եթե վերջինս փոխհատուցում կպահանջի ձեզանից:

Օրինակ ՝ հեծանիվ վարելիս, ձեր երեխաներից մեկը վնասում է ինչ -որ մեկի մեքենան և այդ մարդը ձեզանից փոխհատուցում է պահանջում: Այս , եթե դուք ունեք երրորդ անձի ապահովագրություն, ապա ապահովագրական ընկերությունը վճարում է բոլոր ծախսերը: Փոխհատուցումը, այս դեպքում, վստահ եղեք, կստանաք:

Ընտանի կենդանիների համար նախատեսված ապահովագրություն: Շները, ձիերը և կատուները և տնային այլ կենդանիներ ներառված են ապահովագրության այս տեսակում, որի արժեքը տարեկան գնահատվում է մոտ 100 եվրո: Կան բազմաթիվ ընկերություններ, որոնք առաջարկում են ապահովագրության բազմազան տարբերակներ, իսկ որոշ գերմանական բանկեր նաև տան ապահովագրությունների առաջարկներ են անում:

Մեզանից շատերն ապրում են վարձով տներում, սեփական բնակարաններում կամ բազմաբնակարան շենքերում: Երբևէ ինքներդ ձեզ հարց տվե՞լ եք, թե ի՞նչ կլիներ, եթե դուք կամ ձեր ընտանիքում ինչ -որ մեկը հրդեհի պատճառ դառնար: Տան ապահովագրությունը ծածկում է ցանկացած ծախս, որը կարող է առաջանալ ձեր տանը, օրինակ եթե տանը ինչ -որ բան քանդվի, հրդեհ լինի կամ գողություն կատարվի: Խնդրում ենք ուշադրություն դարձնել այն փաստին, որ դեպքի մասին պետք է անհապաղ տեղեկացնել ապահովագրական ընկերությանը:

Այն փոխհատուցում է նաև տան վնասված գույքը և կարևոր է ոչնչի ձեռք չտալ մինչ ընկերության ներկայացուցչի գնահատումը:

Ճանապարհորդական ապահովագրություն, բջջային հեռախոսի ապահովագրություն:

Բջջային հեռախոս գնելիս հեռախոսը հաճախ ապահովագրված է, իսկ եթե ոչ ապա առավել ձեռնտու է բջջային հեռախոսի ձեռք բերած վայրում ապահովագրումը կատարել, քանի որ այս տեսակի ապահովագրությունը ապահովագրական ընկերությունում թանկ է գնահատվում:

Շատ կարևոր է ընկերության հետ ապահովագրական պայմանագիր կնքելիս ուշադրություն դարձնել բոլոր մանրամասներին, քանի որ երբեմն լինում են անճշտություններ, որոնք հետագայում լուրջ խնդիր կարող են առաջացնել: Շատ կարևոր է նաև ժամանակին կատարել վճարումները՝ որպեսզի վնասի փոխհատուցման ժամանակ հարցեր չառաջանան: